

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

845  
17-68

ԱՐԵՎՈՆ ԶԱՐԵ



ՀԱՄԱԿՆԵՐ  
ԻՄ  
ԶՐԱԴԱՅԻՑ

30 MAY 2011

Հարմ.  
3-30662  
8415  
7-68

Ա. Տ. Յ Ա Ն Ո Գ Գ Ե

# ԱՄԱԿՆԵՐԻ ԻՄ ԶՐԱԴԱՑԻՑ

Նկարներ  
Ա. ԶԱԿՐԺԵՎՈՒԿՈՎԻ



ՀԱՅ. 10591

ՊԵՏՐՈՍ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1939

ՄԵԾԱՀԱՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ԱԼՖՈՆՍ ԴՈԳԵ

(1840—1897)

Յերբ Ալֆոնս Դոգելի «Արլեզանուհիներ» պիեսի առաջին ներկայացման ժամանակ դերակատարներից մեկը մի Փրաղ արտասանեց յերգող դրախտապահների մասին, դահլիճում պիեսի հեղինակի հասցեյին ծիծաղ լսվեց։ Փարիզյան թատերասերները դրախտապահները միայն իրք կերակուր եյին պատկերացնում, և նրանց համար դժվար եր յերեակաւել, թե տապակած ու գարնիրով շրջապատված այդ թռչունները յերգող թռչուններ են յեղել։ Պիեսը ձախողվեց։ Դոգելի կողմից բեմի վրա հանդես բերված համեստ ու կենդանի պոեզիան արհեստագորական դրամատուրգների գործերին վարժված հանդիսատեսներին ձանձրալի թվաց։

Դոգելի պիեսում յերգում եյին իր հայրենիքի թըռչունները։ Յերիտասարդ Դոգեն Ֆրանսիայի հարավային կողմից Փարիզ յեկավ լուսթյան մեջ թաղված փոքր քաղաքների և Պրովանսի լուսաճանանչ գաշտավալրերի ուրախ հիշողություններով։ «Նրանք բոլորն ել աճե, են այնտեղ՝ ծոթորի ու նարդոսի միջև, ալդ լիակատար յերազողները և ջոկովի հնարազետ մարդիկ։ Նրանց արյան մեջ արեն եւ վառվում, իսկ գլխի մեջ լսվում եւ թռչունների յերգը։ Բնագործությունները խորտակող փարիզյան միջավայրում, ջրաղացաքարի պես, նրանք իրենք-իրենց են



40797-67

մում, պահպանում են հողի հոտը, զգալու և հսարելու կենդանի ընդունակությունը»։ Այսպես ե գըել Պրովանսից գուրս յեկած բանաստեղծների մասին նշանավոր վիպասան Եմիլ Զոլան, և այս խոսքերը լիակատար չափով վերաբերում են նաև Դոդեյին։

Բարդ չե Դոդեյի կենսագրությունը։ Առաջին յելությունը մարդաքաղաքի թերթերում և արտգորեն նվաճված փառքը, հետագայում հիվանդության պատճառով Ալժիրում բնակելը, վերջապես նատակյաց տարիները՝ Փարիզում կամ նրա շրջակայքում, Սենայի ափերին մոտիկ, — առա այդ կյանքի վողջ արտաքին իրադարձությունները, լիովին լըցված գրողի աշխատանքով։ Դոդեն սկսեց վուանավոր զրելուց, սակայն շուտով անցավ արձակին՝ պատմվածքի և մի քանի հարյուր խոսքի սահմանում ուշալիստական ուրագագծերի։ Այդ գործերում Դոդեն հարություն տվեց պատանեկության տպագրություններին, բնությանը, ավանդություններին և Պրովանսի մարդկանց։ Այս համառոտ պատմվածքները նա միացրեց «Նամակներ» իմ ջրադացից» ընդհանուր անվան տակ։

Գիրքը յերիտասարդական շունչ ուներ, սակայն նրա յուրաքանչյուր տողը վկայում եր զարմանալի վարպետության մասին։ «Զրադացական Կորնիլի գաղտնիքը» և «Պարոն Սեգենի ալծիկն» այդ գրքի մեջ ելին մտնում։

Գրողը, վոր սկսել եր վուանավորներից ու պատմվածքներից, հասուն տարիներին վերջնականապես յեկավայն համոզման, վոր «պատահող իրադարձություններն ավելի ուժեղ են, քան հսարովի իրադարձությունները»։ Գրողի պատանեկան գործերում տեղ գտած Փանտաստիկական հերոսներին փոխարինեցին Փարիզի մանր բուրժուաները, չինովնիկները, սպաները, գպրոցական ուսուցիչները և սկսնակ արտիստները։ Սուր գիտողությունը, վորի վարպետը ցուց տվեց իրեն Դոդեն գեռես «Նամակ-

ներ իմ ջրադացից»-ում, հետագայում դարձավ նրա ստեղծագործության բնորոշ գծերից մեկը։

Դոդեն ապրեց Փրանս-պրուսական 1870 թվի պատերազմը, գերմանացիների ներխուժումը Ֆրանսիա, Փարիզի պաշարումը, հեղափոխությունը և այդ իրադարձություններից նա քաղեց իր յերկու-յերեք եջանոց փոքր պատմվածքների—կյանքի կարճ դրամաների և կոմեդիա, ների—ոյուժեանները։

Զանազան քննադատներ Դոդեյին մեղադրում ելին չափազանց համառոտ պատմվածքներ գրելու մեջ։ Կարծես թե ի պատասխան արդ քննադատների, Դոդեն մի անգամ գրել և հետեյալլ։

— Ինչո՞ւ քո յերգերն այդքան կարճ են, — հարցըին մի անգամ մի թաշունի։ — Թե՛ չնշառությունդ քիչ ե։

— Յես շատ յերգեր ունեմ և կուզելի պատմել բոլորը։

Սակայն առատ մատանդացումները չխանդարեցին Դոդեյին գրելու մի շարք վայրուն վեպեր, վորոնք միայն ամրապնդեցին նրա հոչակը։ «Փոքեիկ մարդու» սեջ Դոդեն նկարագրել և իր յերիտասարդության ուղին, իսկ «Տարածեցի Տարտարենի» մեջ սոնեղծել ե որախ, կայծկլուղ մի պատմություն՝ պրովանսական փոքր քաղաքների բնակիչների մասին։ Հգերազանցված սնապարծ ու ստախոս Տարտարենը յերազում ե հերոսական արկածների մասին, բայց և այնպես, կարարինների ու լասուի փոխարեն, գերազաւում ե առաջ գործած ֆուֆայկա և մի բաժակ շոկոլադ։

Դոդեն յերբեք իրական ու ծավալուն կերպով չըընադատեց իր ժամանակակից հասարակությունը, սակայն, հումանիստական զաղափարներով ավելի շատ տարպած լինելով, քան վորոնք այլ բուրժուական գրող, նաև, մարդկային կյանքի խոր դիտողը, սառնարյուն տարեգրողը չհանդիսացավ։

Իր մահվանից քիչ առաջ՝ Դոդեն կես-կատակով իրեն անվանել է «բախտ վաճառող»։ Միշտ նրան եյին գիմում խորհրդի և ոգնության համար, նրա մոտ վորոնում ելին վշտերի սփոփանք. և Դոդեն, վորն արդեն անկողին եր ընկեր, կարողանում եր ցըել ոտարի հոգսերը և մեղմել նրա տխրությունը։

Սակայն «Բախտ վաճառող» կոչմանն ել ավելի իբա-վունք եյին տալիս նրա գրքերը, վորովհետեւ Դոդեյի պոեզիայի գաղանիքը սերն եր մարդու նկատմամբ—մեծ սրաի պարզ սերը։

### Ա. ՌՈՍԿԻՆ



### ՆԱՄԱԿՆԵՐ ԻՄ ԶՐԱՆՑԻՑ Բնակեցում

Այ թե զարձացել եյին ճագարները, հա...  
Տեսնելով, վոր այդքան ժամանակ ջրաղացի դուռը

փակ ե, իսկ պատերին ու հրապարակում խոտեր են ա-ձեր, նրանք վերջ ի վերջո վորոշել եյին, թե ջրաղաց-պանների տոհմը վոչնչացել ե։ Ալդ վայրը նրանց հարմար եր թվացել, և նրանք ալդաեղ սարքել եյին շտար—ընա-կարանի նման մի բան՝ ուազմագիտական գործողություն-ների կենարոն։ Ժեմապի\* ճագարների ջրաղաց... Ան գի-շերը, յերբ յես յեկա, առանց չափազանցության քսանի չափ ճագարներ կլորածե նստել եյին հրապարակում և լուսի լույսի տակ տաքացնում եյին իրենց թաթիկները... Բայց հազիվ յես բաց արի փոքրիկ լուսամուտը—վու՞ո՞ո՞...

\* Բելգիական ժեմապ քաղաքի մոտ ֆրանս. հանրապետ. գեներալ Դյումուրյեն զլխովին ջարգեց ավատրիացիներին 1792 թվին։ Ծ. թ..

Բացոթլագը պուկ յեկավ, և սպիտակ, փոքրիկ ճագարները, պաշերը վեր ցցած, ծլկեցին թափուտում։ Համենայն դեպս յես հույս ունեմ, վոր նրանք կիբրագանան։

Իսձ տեսնելով շափազանց զարմացավ նաև ծեր գեղահարկի բնակիչը, շարագուշակ բիեճը, վոր քան ապրուց ավելի բնակություն եր հաստատել ջրագացում։

Յես նրան դուք վերեի սենյակում. նա նստած եր գերանի վրա անշարժ և ուղիղ, կեղտի ու թափված կղմինդրի միջի։ Նա նայեց ինձ իր կլոր աչքերով. վախեցագ, չճանաչելով ինձ, և սկսեց զբոսնել՝ դժվարությամբ թափահարելով փոշուց գորշացած թերը։ Նա յերբեք ել չի սաքրում իր թերը։ Բայց միևնույն է։ Այս լուսկյաց ընակիչը, ինչպես վոր նա կա, — ճպճպացող աշքերով և տիրուր դեմքով, — ինձ ավելի յե դուք դայիս, քան վորեւ մեկը, և յես շտապեցի վերանորոգել նրա հետ պայմանագիրը։ Առաջին նման նա պետք եւ գրավի ջրագացի ամբողջ վերեի մասը, հանդիսավոր մուտքով դեպի տանիքը, իսկ յես ձեռքիս կպահեմ ներքեի սենյակը, կրով սպիտակացրած, ցածրիկ, կամահերով փոքր սենյակը, վոր նման և սենաստանի սեղանատան։

Այստեղից ել յես զրում եմ ձեղ. կրնկի վրա սաց և իջ դուռն արեիտ առաջ։ Լույսով վողողված սոճու գեղեցիկ անստար տարածված և իմ առաջ մինչեւ բլրի ստորոտը։ Հորիզոնի վրա հստակ ուրվագծվում եւ Ալպիի սքանչելի գագաթը։ Վոչ մի ձայն.., Միայն ինչվոր տեղից հեռվից հազիվ լսվում են սրնգի ձայներ և նարդոսով ծածկված ճանապարհի վրա ջորիների բոժոժների ձայնը։ Միայն լույս և աշխուժացնում պրովանսական այս ամբողջ գեղեցիկ պեղպաժը։

Յեվ դուք ուզում եք, վոր յես ափսոսմ ձեր աղմբեկու ու սոայլ Փարիզը։ Յես շատ լավ եմ զդում ինձ իմ ջրագացում։ Յես հենց ալդպիսի մի անկյուն եյի վորոնում,

խուլ ու տաքուկ անկյուն, թերթերից, կառքերից ու մշուշից հազար մղոն հեռու... Յեվ վորքան գեղեցիկ եւ իմ շրջապատը։ Մի շաբաթ չի անցել յերբ յես հաստատվել եմ այստեղ, իսկ գլուխս արդեն լիքն եւ տպագրություններով ու հիշողություններով... Որինակ, հենց յերեկ յերեկուան յես ներկա յեղա նախիրի վերադարձին դեպի աղարակը, և յերդվում եմ ձեզ, վոր այդ տեսարանը յես չեմ փոխի այն բոլոր պրեմիերաների հետ, վորոնք զրգելու յեն ձեզ մոտ՝ Փարիզում այս շաբաթ։ Ինըներդ դատեցեք։

Հարկավոր ե ձեզ ասեի վոր Պրովանսում սովորություն։ Կա շոգերն սկսվելիս անասուններին սար տանել։ Կենդանիներն ու մարդիկ հինգ-վեց ամիս անցկացնում են լեռներում, բաց յերկնքի տակ, մինչև մեջքը համուղ խոտերի մեջ, անունեակ աշնան առաջին սարսուռի գեպըում իջնում են աղարակը, և անասունները նորից խաղաղ խոտ են պաճոկում ինկունու հոտավետ գորշ բլրակների վրա...»

Այդպես ուրեմն, յերեկ յերեկոյան հոտերը վերադարձան։ Սոավոտից նրանց սպասող դարպասի դմերը կրնկի վրա բաց են, փարախները լցված են թարմ հարդով։ Ամեն ժամ ադարակում ասում եյին. «Հիմա նրանք Եյդիերումն են, հիմա Պարագումն»։ Հետո հանկարծ, յերեկոյան կողմ, լսվում եւ բարձր ճիչ՝ «Ահա նրանք»։ Յեվ մենք տեսնում ենք հեռվում հոտը, վոր հետզհետեւ փալուն արեի տակ փոշու ամպ եւ բարձրացնում։ Կարծես վողջ ճանապարհը շարժում եւ նրանց հետ.., Հոտի առջեկոց գնում են յեղջուրները ցգած ծեր, վայրենի ուղեցույց դոչերը, նրանց հետեւից՝ վոչխարների մասսան, հոգնած մերունները, զառները գոտների մեջ առած, չորիներ՝ կարմիր ծովերով, վորոնք կողովների մեջ տանում են նորածին գառնուկներ, վորոնց, քալելիս, որոր են ասում։ Նրանց հետեւից գալիս են քրտինքի մեջ կորած շները՝ մինչև գետինը յերկարաց-


բած լեզուներով և լեզկու բարձրահաստակ, խիզտի հովիվ՝  
շիկակարմիր բրդյա տառատոնիներով, վորոնք հառնում են  
մինչև կրնկները, շուրջառի նման:

Այս ամբողջ շղթան ուրախ անցնում է մեր առջևից  
և անհետանում լայնարձակ բակում մի զոփյունով, վորը  
հիշեցնում և տեղատարափի, հեղեղի աղմուկը... Յեվ դուք  
պիտի տեսնեք, թե ինչպես ե նուզգում ամբողջ աղարակը:  
Թափի վրա նստած մեծ, կանաչ, վոսկեփալ սիրամարգերն  
իրենց շղարշալին կատարով, յեկորներին ճանաչելով, դիմա-  
վորում են իւլացուցիչ փողի ձայներով: Նինջ մտած հավա-  
բունը հանկարծ արթնանում ե: Բոլորը վոտրի վրա յեն-  
աղամիխները, բաղերը, հնդկաքաղաղները և խայտահավերը:  
Թուչնաբակը կարծես թե գժվել ե. հավերը կչկչուս են,  
պատրաստվելով գրունել ամբողջ գիշերը... Թվում ե, թե  
յուրաքանչյուր վոշխար իր բրդի մեջ բերել ե Ալպյան  
բուրմունքի հետ միասին լեռնային մի քիչ սուր ող, վորն  
արբեցնում ե և պարելու ցանկություն ե առաջացնում:

Այս ամբողջ աղմուկի մեջ վոչխարի հոտը տեղափոր-  
վում ե իր փարախներում: Զկա ավելի սքանչելի բան, քան  
վոչխարների այս տեղափորումը: Ծեր ուղեցույց-զոչերը,  
նորից տեսնելով մսուրը, կորցնում են իրենց դաժանու-  
թյունը: Գառնուկները,—ամենափոքրերը, վորոնք ծնվել են  
ճանապարհին և իերբեք աղարակը չեն տեսել,—զարմանքով  
դիտում են իրենց շուրջը:

Սակայն ամենից շատ սրտաշարժ են շները, այդ փա-  
ռավոր վոչխարապահ շները. նրանք վոչ մի քալ չեն հե-  
ռանում վոչխարներից և աղարակում վոչ մի բան չեն  
տեսնում, բացի վոչխարներից: Պահապան գամփոն իզուր  
և նրանց կանչում իր բնից. Թարմ ջրով բերներե-  
րան լի զոյլն իզուր և նրանց նշան անում. նրանք վոչ  
մի բան չեն ուզում տեսնել և լսել, քանի դեռ անասուն-  
ները չեն մտել վոչխարանոցը, քանի դեռ վոչխարանոցի

դոների փականները չեն չխկացել վոչխարանոցներ, վո-  
րոնք ունեն ցանցավոր գորքը պատուհաններ, և քանի դեռ  
հովիմները սեղան չեն նստել ցածլիկ առաստաղ ունեցող  
մեծ սենյակում: Միայն այդ ժամանակ են նրանք համա-  
ձայնում գնալ իրենց բունը և այնտեղ, ամանից ապուր  
լակելով, իրենց ագարակի ընկերներին պատմում են, թե  
ի՞նչ են արել լեռներում, դաժան վայրերում, ուր թափա-  
ուում են գայլերը և բուսնում են խոշոր ծիրանեղույն-  
դեղին մատնեսունկեր՝ մինչև յեղրերը շաղով լցված:



## ԶՐԱՆԱՑԹԱՆ ԿՈՐՆԻԼԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Ֆրանսուա Մամայը, ծեր սրնգահարը, վոր ժամանակ առ ժամանակ յերեկոները գալիս եր ինձ մոտ մի բաժակ հին գինի խմելու, մի անգամ ինձ պատմեց գլուղական մի փոքր դրամա, վորին վկա եր լեզել իմ ջրաղացպանը սրանից քսան տարի առաջ: Բարի ծերուկի պատմությունը հուզեց ինձ, և յես փորձում եմ հաղորդել ձեզ այն ձևով, ինչպես լսել եմ:

Մի բոպե պատկերացրեք ձեզ, թանգագին ընթերցողներ, վոր գուշ նստած եք զարգանալիորեն անուշանոտ գինու կժի առաջ և վոր ալս բոլորը ձեզ պատմում ե ծերունի սրնգան արը:

— Մեր լերկիրը, թանգագին պարոն, միշտ այսպես մեռած չի յեղեք վորի մեջ յերդ անգամ չես լսի, ինչպես հիմա: Մի ժամանակ մեր յերկրում ծաղկել եր ալրաղացային արհեստը, և ամեն կողմից, նույնիսկ տաս մոտն հեռավորությունից ագարակատերերն իրենց հացահատիկը բերում եյին աղալու... Քլուզի շուրջը գտնված բոլոր բլուրների վրա հաստատված եյին հողմաղացներ:

Այ ու ձախ, վորտեղ վոր նայում եյիր, ամենուրեք յերեսում եյին հողմաղացի թեկը, վորոնք պատվում եյին սոճիների վերեսում միստրալի \* ուժով, ճանապարհի վրա յերեսում եյին պարկերով բեռնված իշուկների յերամակներ, վորոնք յերեմն բարձրանում եյին, յերբեմն՝ իջնում: Ամբողջ շաբաթը հաճելի յեր լսել մտրակների շաջյունն ողի մեջ և հողմաղացներում աշխատող բանվորների ձայները... կիրակի որերը մենք ամբողջ խմբերով մասն եյինք գալիս ջրաղացներում: Այստեղ ջրաղացպանները մեզ հյուրասիրում եյին մուսկատի գինով: Ժանեկաղաքարդ շորերով ջրաղացպանուհիներ՝ վոսկե խաշը վզներին այնքան լավն ելին, կարծես հեքիաթալին թագուհիներ լինեյին: Յես սովորաբար ինձ հետ եյի վերցնում իմ սրինգը և մինչև ուշ գիշերը բոլորս ֆարանդոլ\*\* եյինք պարում: Այդ հողմաղացները, ինչպես տեսնում եք, մեր յերկրի պարծանքն ու հարստությունն ելին.

Դժբախտաբար, վարիդեցի ֆրանսացիները վորոշեցին շոգեաղաց կառուցել ծարասկոնի ճանապարհի վրա: Այդ գեղեցիկ եր, ըստ վորում և նորություն: Մարդկակ հետզհետե վարժվեցին հացահատիկն այստեղ տանել աղալու և խեղճ հողմաղացներն առանց աշխատանքի մնացին: Մի քանի ժամանակ աշխատեցին պայքարել նրա գեմ, սակայն շոգեաղացն ուժեղ դուրս յեկավ, և — ավաղ — մեկը մյուսի հետեից նրանք ստիպված յեղան փակվել... Ալես իշուկներ չեյին լերեսում... Գեղեցիկ ջրաղացպանուհիները ծախսեցին իրենց վոսկե խաչիկները... Զմիաց նաև մուսկատի գինին: Մոռացվեց նաև ֆարանդոլը... Յեկ, վորքան ել փշում եր

\* Միստրալն ուժեղ, սառն ու չոր քամի յե Ֆրանսիայի հարավարեւելքում:

\*\* Ֆարանդոլը շատ հին պրովանսական խմբապար է, վոր բնորոշ և իր արագ տեմպով և ձեփ բազմաղանությամբ:

միստրալը, հողմաղացների թեերը մնացին անշարժ...  
Այսուհետեւ մի գեղեցիկ որ ել գյուղական համայնքը  
հրամայեց մեջտեղից վերացնել ալդ հնամաշ շինություն-  
ները, իսկ նրանց տեղն աճեցրին խաղողի այգիներ և  
անկեցին ձիթենիներ:

Սակայն այդ ավերածության մեջ անվասա մնաց մի  
հողմաղաց և բլրի վրա շարունակեց խիզախորեն պտտեց-  
նել իր թեերը, ի հեծուկս շոգեաղացների: Դա Կորնիլ  
պապի հողմաղացն եր, այս Կորնիլ պապի, վորի ջրաղա-  
ցում մենք այժմ յերեկոն ենք անցկացնում:

Կորնիլ պապը ծեր ջրաղացպան եր, վոր արդեն  
վաթսուն տարի գործ եր ունեցել այսուրի հետ և շատ  
եր սիրում իր գործը: Շոգեաղացի յերեան գալու հետ  
նա կարծես թե գժվել եր: Մի ամբողջ շաբաթ տեսնում  
ելինք, թե ինչպես նա վազ եր տալիս գուղերը, իր շուրջն  
եր հավաքում ժողովրդին և ամբողջ կոկորդովը մին բղա-  
զում եր, թե աւս նորակառուց շոգեաղացում թունավո-  
րում են վողջ Պրովանսի ալյուրը: «Միք գնա այնտեղ,—  
ասում եր նա,—այդ ավազակները ցորենն աղում են շոգու-  
միջոցով, իսկ շոգին սատանայի հնարած բանն ե. իսկ յես  
աշխատում եմ միստրալի և տրամոնտանի\* ոգնությամբ,  
վորը հենց տեր աստծո շունչն ե...» Յել նա գտնում եր  
բազմաթիվ արդպիսի գեղեցիկ խոսքեր, գովարանելով հող-  
մաղացները, սակայն վոչ վոք նրան չեր լսում:

Այն ժամանակ կատաղած ծերունին փակվեց իր հող-  
մաղացում և ապրում եր այնտեղ մեն-մենակ, վայրի  
գազանի նման: Նա մինչև անդամ չցանկացավ մոտը պա-  
հել իր թոռնիկ Վիվետին, տամանենինդ տարեկան մի աղջ-  
կա, վորը ծնողների մահից հետո աշխարհում վոչ վոք

\* Տրամոնտանը հյուսիսային քամի յեւ:

չուներ, բացի իր պապից: Թշվառ աղջիկն ստիպված  
յեղագի ինքն աշխատել իր գոյությունը պահելու, ծառա-  
յության մտնելով մեկ այստեղ, մեկ այնտեղ ազարա-  
կատերերի մոտ՝ հնձի ժամանակ, ձիթապտուղ կամ բոժոժ  
հավաքելիս: Սակայն բանից զուրս եր դալիս, վոր պապը  
շատ եր կապված իր թոռնիկի հետ: Նա հաճախ չորս մղոն  
ճանապարհ եր գնում վոտքով՝ արևի կիզիչ ճառագայթ-  
ների տակ, վորպեսզի նրա հետ տեսնվի այն ագարակում,  
ուր աղջիկն աշխատում եր, իսկ լինելով նրա մոտ, ժա-  
մերով նայում եր իր թոռնիկին և լաց եր լինում...

Շրջապատում գտնվող մարդիկ լինթադրում եյին,  
վոր ծերունի ջրաղացպանը ժլատությունից ե հեռաց-  
րել Վիվետին իր մոտից, և, համոթ իրեն, նա թույլ ե  
տվել իր թոռնիկին թափառել ազարակից-ազարակ, յեն-  
թարկվել ամեն տեսակի կոպտության բատրակների կող-  
մից ու բոլոր տեսակի ձախորդությունների, վորոնց  
հանդիգում ե ջահել աղջիկը ծառայության մտնելով:

Ամենեին չեյին խրախուսում նաև այն, վոր այդպիսի  
պատվագոր մի մարդ, ինչպիսին ջրաղացպան Կորնիկն եր,  
վորը մինչև այդ ժամանակ մեծ արժանապատվություն եր  
հանդես բերել, այժմ փողոցներն եր չափչփում վոտքո-  
րիկ, հագին ցնցոտի, ծակծկված գլխարկով: Բանը մինչև  
այնտեղ հասավ, վոր յերբ կիրակի որերը մենք նրան հան-  
գիպում եյինք յեկեղեցում՝ պատարագի ժամանակ, մենք՝  
ծերունիներս սկսեցինք ամաչել նրա վրա նախելիս: Յել  
Կորնիկը շաա լավ զգում եր այդ, վորովհետեւ արդեն սիրո  
չեր անում նստելու պատվագոր նստարանի վրա: Սովո-  
րաբար նա աղքատների հետ միասին կանգնում եր յեկե-  
ղեցու խարքում, զողարանի մոտ:

Ջրաղացպան Կորնիկի կյանքում ինչ-վոր անհասկանալի  
բան կաք: Վաղուց եր արդեն, վոր գյուղում վոչ վոք  
նրան հացահատիկ չեր տանում աղալու, իսկ չնայած

գրան՝ նրա ջրաղացի թերը շարունակում էլին առաջվան պտտվել... Յերեկոները ճանապարհի վրա կարելի յեր հանդիպել ծեր ջրաղացպանին, վոր քշում եր իր ա-



ռաջից գնացող իշուկին՝ ալլուրի ծանր պարկերով բարձված։ — Բարի իրիկոն, Կորնիլ պասի, — ձայն ելին տալիս նրան գուղացիները։ — Իո հողմաղացը, նշանակում ե, դեռևս ելի աշխատուժ ե։

— Այս, բիչ-միչ, զավակներս, — կայտառ պատասխանում եր նրանց ծերունին։ — Փառք աստծո, չի կարելի դանդատվել աշխատանքի քչությունից։

Յեզ լերբ մի ուրիշ անգամ նրան հարցնում էլին, թե վերջաղացի վորտեղից, սատանան տանի, այդքան աշխատանք կարող ե լինել նրա մոտ, նա մատը դնում եր շըրթունքներին և լուրջ պատասխանում եր։ — «Աս՛ Յես աշխատում եմ եքսպորտի համար...» Ել ուրիշ վոչինչ չեր կարելի դուրս բաշել նրանից։

Հողմաղացի դրանից ել նայել չեր լինում՝ տեսնելու, թե ինչ ե կատարվում այստեղ։ Մինչև անգամ վկիվեն ել չեր համարձակում հողմաղաց մտնել...»

Հողմաղացի մոտից անցնելիս, միշտ կարելի յեր տեսնել փակված դուռը, միշտ պտտվող հսկայական թերը, պառաված իշուկին՝ հողմաղացի առաջ գտնված մարգագետնի վրա արածելիս, և նիհար կատվին, վորը պատուհանին նստած տարանում եր արեի տակ, բարկացած նայելով անցորդներին։

Այս բոլորից փչում եր ինչ-վոր գաղտնիք, և այս ամենը շատ տարբեր մեկնաբանությունների տեղիք ելին տալիս։ Ամեն մարդ իր տեսակետով եր բացատրում ջրաղացպան Կորնիլի գաղտնիքը, սակայն բոլորն ել հանգում ելին մի բանի, վոր ջրաղացում փողի տոպրակներն այսուրի տոպրակներից ավելի շատ են։

Ժամանակի ընթացքում, սակայն, ամեն ինչ բացահայտվեց, և ահա թե ինչպես։

Մի գեղեցիկ որ, յերբ յերիտասարդները պարում ելին իմ սրնգի ձաների տակ, նկատեցի, վոր իմ ակագ վորդին և վկիվետը սիրահարված են մեկը մյուսի վրա։ Իսկապես, յես գոն չելի դրանից, չնայած, վոր Կորնիլի անունը հարգանք եր վայելում մեզ մոտ։ Ինչ խօսք, վոր այս գեղեցիկ թունակը — վկիվետը — կճախրեր իմ տանը և իսձ մեծ



բավականություն կպատճառեր։ Սակայն, քանի վոր մեր սիրահարվածները հաճախակի միասին ելին լինում, ինո վճռեցի, հնարավոր բամբասանքներից խուսափելու համար, շուտով վերջացնել այս գործը և խսկույն գնալ ջրաղաց՝ պապի հետ խոսելու... Ա՛յս, ծերունի կախարդ։ Պետք եր տեսներ, թե նա ինչպես ընդունեց ինձ։ Վոչ մի կերպ շնաջողվեց, վոր նա դուռը բաց աներ ինձ համար։ Յես, վորքան կարողացա, փականքի ծակից բացատրեցի նրան իմ գալու պատճառը։ Իսկ քանի դեռ խոսում եքի դուն առաջ, այդ ավազակը—լուր կատուն—ամբողջ ժամանակ, սատանի նման, ֆշացնում եր իմ գլխավերեւ։

Ծերունին թույլ չտվեց ասելիքս վերջացնեմ և չափաց անքաղաքավարի կերպով գոռաց ինձ վրա, վոր յես հեռանամ և վոր յեթե յես այդքան շատապում եմ ամուսնացնել վորդուս, ապա կարող եմ ուղեսորվել շոգեաղացը և նրա համար հարսնացու գտնել... Դուք հասկանաւմ եք ինձ, արյունս գլուխս խփեց, յերբ լսեցի այդ չար խոսքերը, սակայն զսպեցի ինձ, և, թողնելով ծերունի խելագարին իր ջրաղացաքարի մոտ, գնացի յերեխաներին հաղորդելու անհաջողության մասին... Խեղճ գառնուկները չհափառացին այդ բանին։ Նրանք ինձանից թույլտվություն խնդրեցին յերկուսով գնալ հողմաղաց՝ պապիկի հետ խոսելու... Յես քաջություն չունեցա, սիրո չարի մերժել նրանց, և—հայդե—իմ թոշնիկները թուան-գնացին։

Սակայն հենց այն ժամանակ, յերբ նրանք հասան հողմաղացին, կորնիլը ինչ-վոր տեղ եր գնացեր Դուռն ամուբ փակված եր բանալիով, բայց, հեռանալով, ծերունին թողել եր սանդուխսքը դրափ կողմից, և յերեխաների մեջ խսկույն միտք ծագեց ներս նայել պատռհանից և թեկուզ մի աչքով դիտել, թե հատկապես ինչ է կատարվում այդ նշանավոր ջրաղացում...

Տարորինակ բան։ Ջրաղացաքարերի սենյակը բատարկ եր... Վոչ մի պարկ, ցորենի վոչ մի հատիկ. պատերի վրա

ալյուրի և վոչ մի հետք, ինչպես և սարդոստայնի վրա .. Մինչեւ անգամ նոր աղացած հաճելի ցորնահու ել չեր գալիս.. փայտե գլանը ծածկված եր փոշիով, և նրա վրա քնել եր մեծ լզար կատուն։

Ներքեի սենյակն ել նույն խղճուկ ու անխնամ տեսքն ուներ. կեղտոտ անկողին, ինչ-վոր ցնցոտիներ, հացի մի կտոր սանդուխի աստիճանների վրա, իսկ սենյակի անկունում ընկած եր յերեք կամ չորս ճաքճքած պարկ, վորից թափվել եյին խիճ ու կիր։

Ահա թե վորն եր ջրաղացպան կորնիլի գաղանիքը։ Այդ աղբը նա յերեկոները տանում եր ճանապարհներով, վորպեսպի վրկի հողմաղացի պատիվը և ստիպի բոլորին հավատալու, վոր այնտեղ աղում են աղում.. Խեղճ հողմաղաց... Խեղճ կորնիլ։ Վաղուց ե արդեն շոգեաղացը խլել նրանից վերջին աշխատանքը։ Հողմաղացի թերերը գեռ ևս պտըտ վում եյին, սակայն ջրաղացաքարերը շարժվում եյին առանց հացահատիկ աղալու։

Յերեխաներն արցունքն աչքներին վազ տվին ինձ մոտ և պատմեցին, ինչ վոր տեսել ելին։ Միրտա ձմրվեց, յերբ յես լսեցի նրանց... Մի բոպե անգամ չկորցնելով, վագեցի հարեւաններիս մոտ, յերկու խոսքով պատմեցի բոլորը, և մենք վորոշեցինք խսկույն և յեթ կորնիլի հողմաղացը փոխազրել մեզ մոտ գտնված վողջ ցորենը... Ասացինք ու կատարեցինք։ Ամբողջ գլուղը ճանապարհ ընկավ, և մենք ամբողջ եշերի շարանով վերև, բլուրը բարձրացանք, այս անգամ տանելով խսկական հացահատիկ աղալու համար։

Հողմաղացի դուռը կրնկի վրա բաց եր... Դուռն առաջ կրի պարկի վրա նստել եր կորնիլ պապին, և գլուխը ձեռների մեջ առած դառնաղի լաց եր լինում։ Վերագառնալով տուն, նա խսկույն նկատել եր, վոր իր բացակայության ժամանակ ինչ-վոր մեկը յեղել ե իր մոտ և բաց ե արել իր տխուր գաղտնիքը։

— Ա՛յս, դժբախտ յեմ յես,— ասում եր նա։ — Այժմ

ինձ միում ե միայն մեռնել... Հողմաղացն անպատփված ե:

Յեկ նա այսպես հեկեկաց, վոր նալելով նրա վրա, մարդու սիրտը ճմլվում եր խղճալուց: Նա իր հողմաղացին տարբեր անուններ եր տալիս և նրա հետ խոսում եր, կարծես կենդանի ելակ լիներ:

Այդ բոպելին եշերը հասան հրապարակը, և մենք բոլորս սկսեցինք բարձր գոռալ, ինչպես հողմաղացապանների ծաղկման հին, բարի ժամանակները.

— Ե՞ս, հողմաղաց: Ե՞ս, Կորնիլ պապի:

Յեկ ահա պարկերը դեղ կազմեցին դուան առաջ, և գեղեցիկ գոռկեգույն հացահատիկը շաղ յեկավ գետնի վրա՝ բոլոր կողմերից...

Կորնիլ պապին զարմանքով լայն բաց արավ աչքերը: Նա իր ծերացած ձեռքի մեջ մի բուռ հացահատիկ վերցրեց, և ծիծաղերով ու լալով միաժամանակ, կրկնում եր.

— Բայց չե՞ վոր սա հացահատիկ ե... Ազնիվ խոսք: Սքանչելի հացահատիկ ե... թողեք՝ մի լավ տեսնեմ:

Հետո գառնալով մեղ.

— Ո՛, յիս գիտելի, վոր դուք կիերաղառնաք ինձ մոտ... Շողեաղագի բոլոր տերերը գողեր են:

Մենք ուզեցինք հաղթական կիերպով նրան զյուղը տաներ:

— Վո՞չ, վո՞չ զափակներս, ամենից առաջ լես պետք ե իմ հողմաղացին կիերակեմ... Մտածեցեք միայն՝ չե՞ վոր շատ վաղուց ե, վոր նրա ատամների տակ բան չի ընկել:

Մեր բոլորիս աչքերն արցունքով լովեցին՝ տեսնելով առ թշվառ ծերունուն, վոր դես ու դեն եր վազում, մեկ բաց եր անում պարկերը, ոեկ նայում եր ջրաղացաքարին, յերբ հացահատիկն աղում եր և շարժադ ալյուրի փոշին թռչում եր դեպի առաստաղը:

Պետք ե ճշմարիտն ասել, վոր սկսած այդ որից մենք յերբեք առանց աշխատանքի չթողինք ծերունի ջրաղաց-



պանին: Հետո, մի առավոտ, Կորնիլ պապին մեռավ, և մեր վերջին հողմաղացի թերը դադարեցին պատվելուց՝ այս անգամ արգեն ընդմիշտ... Կորնիլը մեռավ, և վոչ վոր

Հվովարինեց նրան: Ի՞նչ կարող ես անել, պարհ... Աշխարհում ամեն բան իր վախճանն ունի: Յեկ պետք ե յենթադրել, վոր հողմաղացների ժամանակն անցել է, ինչպես Խոնի վրա նավող հարթահատակ նավերի ժամանակը, վորոնք պարանով ելին քաշում և վորի նավավարները հազնում ելին խոշոր ծաղկավոր կարճ վերնազգեստ:



### ՊԱՐՈՆ ՍԵԳԵՆԻ ԱՅԾԻԿԸ

Պարոն Պիեր Գրենզուարին, լիրիկ բանասեղծին, Փարիզ:

Դու, հավանաբար, յերբեք չես փոխվի, խեղճ Գրենզուար: Ի՞նչպես: Քեզ լրատվի պաշտոն են առաջարկում փարիզան մի պատկառելի թերթուս, և դու համարձակություն ես ունենում հրաժարվելու... Մի ինքո քնզ վրա նայիր, զժբախտ մարդ: Մի նայիր ալդ քրքրված ֆուֆարկացիդ, այդ ծակծկված վարտիկիդ, այդ լղար դեմքիդ, վորը խոսում ե քաղցածության մասին: Ահա թե ուր հասցըց քեզ հնչյունահանվի կիրքը: Ահա թե ինչ նստեց քեզ վրա տաս տարի նորին Ապոլոնի մեծության քուրմ դասնալու քո աղնիվ ծառայությունը... Բայց միթե, վերջապես, ամոթ չե քեզ ալդ բանը:

Դե լրատու դարձիր, հիմար: Լրատու դարձիր, ելի:

Դու կատակելով հրաշալի եօյուներ\* կվաստակես, դու կճաշես  
Բրերանտի մոտ, իսկ պրեմյերաների որերում կարող ես  
հանգես գալ փետրազարդ գլխարկով:

ԶԵ. ԶԵս ուզում... Դու մտադիր ես մինչև վերջն ա-  
զատ թռչնիկ մնալ... դե ինչ կա վոր: Այդ դեպքում լսիր  
«Պարոն Սեգենի այծիկի» պատմությունը: Դու կտեսնես,  
թե ինչ բանի կհացնի ազատ ապրելու ցանկությունը:

Պարոն Սեգենն այծերի կողմից իսկի բախտ չուներ:  
Բոլորին ել միենառյն կերպով եր կորցնում. մի զե-  
ղեցիկ առավատ նրանք կտրում եյին իրենց կապը, վազում  
երին սարը և անտեղ վազը նրանց ուտում եր: Վհչ տի-  
րոջ գգվանքը, գնչ զայլի վախը, վոչինչ չեր կասեցնում  
նրանց: Ինչպես յերեռում է, ստրկությունն ատող այծեր եյին,  
վորոնք ինչ գնով վոր լիներ ուզում եյին ազատ մնալ:

Բարի Սեգենը, վորը բնավ չեր հասկանում իր կեն-  
դանիների բնավորությունը, տիրում եր այս բանը տես-  
նելով: Նա ասում եր:

— Բավական ե: Այծերն ինձ մոտ տիրում են: Այլևս  
նրանց ել չեմ պահելու:

Սակայն, նա չհուսահատվեց և վեց այծ միենայն  
կերպով կորցնելուց հետ, յոթերորդն ել գնեց. բայց այս  
անգամ նա աշխատեց ընտրել բոլորովին մատաղ մի այծ,  
վորպեսզի ավելի ուժեղ կերպով կապվեր իր հետ:

Ո՞, Գրենգուար: Վորքան սիրուն եր պարոն Սեգենի  
այդիկը: Հանգարտ աչքեր, մետաքսանման վորը մո-  
րուք, փալլուն և ու սմբակներ, զոլավոր յեղջյուրներ,  
ինչպես զեբը, և յերկար սպիտակ մազեր, վորոնք հին լայն

\* Եքյուն Փրանսիական շատ հին արծաթյա դրամ ե,  
վորը յըշանառության մեջ դրվեց 14-րդ դարում: Այդ դրամը  
շատ անգամ ձեռփոխվել ե և տարբեր արժեք և ունեցել:

Ծ. թ.:

պարեգոտի պես մինչև գետին եյին վովում: Այդ այծիկն  
եսմերայդի\* այծիկի նման գեղեցիկ եր, — հիշմում ես,  
Գրենգուար, — դրա հետ միասին հեզ եր, քնքությ կթի ժա-  
մանակ միշտ խոնարհ կանգնում եր իր տեղում և յերեք  
վոտքը չեր կոխում կովկթի մեջ: Պարզապես սքանչելի բան  
եր այդ այծիկը:

Սեգենը յուր տան հետևում մի շրջափակ պարտեղ-  
ուներ, վոր պատաճ եր մլենու թփերով: Այստեղ եր, վոր  
նա տեղափորեց իր նոր սանուհուն: Նա կապեց այծիկին  
մի ցցի՝ արոտի ամենալավ տեղում, դիտմամբ ավելի յերկար  
թողեց եասլը ու յերեմն զալիս եր նայելու, թե այ-  
ծիկը լավ և զգում իրեն արդլոք: Այծիկն իրեն շատ բախ-  
տավոր եր զգում և այնպես ախորժակով եր ուտում խոտը,  
վոր պարոն Սեգենը հիացմունքի մեջ եր:

«Վերջապես, — մտածում եր խեղճ մարդը, — յես գտա  
մի այծ, վորը չի ձանձրանա ինձ մոտ»:

Բայց պարոն Սեգենը սխալվեց: այծը ձանձրացավ:

Մի անգամ, նայելով լեռներին, այծիկն ինքն իրեն  
ասաց:

— Ինչքան սքանչելի պետք ելինի այնտեղ, բարձրում:  
Վորքան համելի յե ցատկուել անտառում առանց այս  
անիծյալ կապի, վորը վիզս քերթում ե... եղերը կամ յեզ-  
ները միան կարող են ճարակել այսպիս փակված տեղում...  
իսկ այծերին հարկավոր ե ազատ տարածություն, ազա-  
տություն:

Այդ ժամանակվանից սկսած՝ շրջափակի խոտը սկսեց  
նրան անհամ թվար: Նրան հաղթահարում եր տրոտությունը:

\* Եսմերայդան վ. հյուգոյի «Փարիզի աստվածամոր ատճարը»  
վեպի գործող անձերից մեկն ե — մի սքանչելի գնչու աղջիկ:  
վոր ամենուրեք յերեան և զալիս վոսկեգույն յեղջյուրներ  
ու-  
նեցող իր Զալի անունով այծիկի ուղեկցությամբ:

Ծ. թ.:

Նա նիհարում եր և սկսեց քիչ կաթ տալ: Սրաաշարժ բան  
եր նրա վրա նայելը, թե ինչպես նա որերով կապը քարշ  
եր տալիս, գլուխը մի կողմ ծռած, պնջները բացած գոյն-  
գատավոր մարում եր — Մէե:

Պարոն Սեգենը նկատում եր, անշուշտ, վոր իր այ-  
ծիկի հետ ինչ-վոր բան եր կատարվում, բայց չեր հաս-  
կանում, թե ինչ: Մի առավոտ, յերբ նրան կթեց պրծավ,  
այժը դարձավ դեպի նա և իր լեզվով ասաց.

— Լսեցեք, պարոն Սեգեն, յես հլու ծվում եմ ձեզ  
մոտ, թողեք ինձ գնամ լեռները ման գալու:

— Ա՛խ, աստված իմ... Սա ել, — բացականչեց պարոն  
Սեգենը զարմացած և հանկարծ ձեռքից բաց թողեց կով-  
կիթը. հետո նստեց խոտի վրա՝ իր այծի կողքին.

— Ինչպես, Բլանքեթ, դու ուզում ես թողնել ինձ:  
Յեվ Բլանքեթը պատսսխանեց.

— Այն, պարոն Սեգեն:

— Միթե այստեղ պակաս և խոտդ:

— Ո՞հ, վոչ, պարոն Սեգեն:

— Թերես, չվանդ կարճ ե, կուզե՞ս յերկարացնեմ:

— Նեղություն մի կրեք, պարոն Սեգեն:

— Այդ գեղաքում ի՞նչդ ե պակաս: Ի՞նչ ես ուզում:

— Ուզում եմ սարը գնալ, պարոն Սեգեն:

— Բայց, թշվառական, դու չգիտես, վոր լեռներում  
դայլ կա... դու ի՞նչ պիտի անես, յերբ գալլը գա:

— Յեղջուրի հարվածներ կտամ, պարոն Սեգեն:

— Կարծես թե շատ սարսափելի յեն ըո յեղջուրները:  
Գայլն ինձանից քեզ նման յեղջուրներ ունեցող շատ ար-  
ծեր ե տարել: Մի՞թե դու չես հիշում այն խեղճ մերնող  
այծին, վոր անցյալ տարի այստեղ եր: Նա ուներ գերա-  
զանց յեղջուրներ, նոխազի պես ուժեղ ու չար: Նա ամ-  
բողջ զիշերը կովել եր գայլի հետ, սակայն առավոտան  
գալլը, այնուամենայնիվ, կերել եր նրան:

— Ա՛խ, խեղճ մերնող... Սակայն այդ վոչինչ չի նշանա-  
կում, պարոն Սեգեն, թույլ տվեք ինձ սարը գնար:

— Վողործած աստված, — ասաց պարոն Սեգենը: — Այս  
ի՞նչ ե պատահում այծերիս հետ: Սրան ել և գայն ու-  
տելու: Բայց վոչ... չեմ թողնի, չեմ ազատի քեզ, տիմար,  
իսկ վորպեսզի դու քո կապը չկտրես, քեզ վարախը  
կտանեմ, և միշտ այստեղ փակված կմնաս:

Այս ասելով, պարոն Սեգենն այծին տարավ մի մասնթ  
փարախի, դուռն ել ամուր փակեց: Դժբախտաբար, նա մա-  
ռացել եր փակել լուսամուտը, և նոր եր դուրս յեկել  
դռնից, յերբ այծիկը թուավ-փախավ...

Դու ծիծաղնում ես, Գրենգուար: Բայց ի՞նչ ասեմ,  
տեսնում եմ, վոր դու այծի կողմն ես և այդ պարոն  
Սեգենի դեմ: Տեսնենք, դու վերջն ել կծիծաղնու:

Սպիտակ այծիկի յերեան գալլ լեռներում ընդհանուր  
հիացմունք առաջ բերեց: Հնամայ յեղենիները յերեք այգ-  
քան գեղեցիկ այծ չեյին տեսել: Նրան լնդունեցին փոքրիկ  
թագունու պես: Շագանակենիները մինչեւ գետին եյին  
խոնարհվում՝ իրենց ձյուղերով նրան գգվելու համար:  
Վոսկեգույն գեղնածաղիկները բացվում ելին, յերբ նա  
անց եր կենում, և բուրում եյին այնքան անուշ, վորքան  
կարող եյին: Ամբողջ լեռը պատվում եր նրան:

Կարմաղ ես պատկերացնել, Գրենգուար, թե վորքան  
յերջանիկ եր մեր այծիկը: Վո՞չ չվան կար, վո՞չ ցից...  
Վոչինչ, վոր արգելեր նրան իր ուզածի չափ վոստոսե-  
լու և իր ընտրությանը խոտ ուտելու: Իսկ վորքան խոտ  
կար այնտեղ: Յեղջուրներից բարձր, սիրելիս... Յեվ  
ինչպիսի խոտեր՝ հյութալից, փափուկ, ատամնավոր յեղ-  
ջուրով — ամենաբազմատեսակ խոտեր... Բոլորովին նման  
չեր շրջափակի ցածրահասակ խոտերին: Հապա ծաղիկները...  
Մեծ, կապուտ զանգակածաղիկներ, ծիրանի մատնացա-  
ծաղիկներ՝ յերկար պատյաններով, դաշտալին ծաղիկների  
մի ամբողջ անտառ, արբեցուցիչ հյութերով լիքը...

Սպիտակ այծիկը կիուհարբում եր, թափալվում եր,  
Առաջինի առապարների վրա ընկած տերեների ու  
շագանակների հետ։ Հետո հանկարծ մի վոստյունով ցատա-



կոտում եր։ Հոգ։ Ահա նա արդեն զլուխն առաջ ձգած,  
թփուտների ու մացաների միջով անցնելով, լերեռում և  
մեկ՝ ժայռի վրա, մեկ՝ հովտի խորքում, բարձրում՝

ցածրաւմ, ամենուրեք... թվում եր, թե լեռներում վոչ թե  
մեկ, այլ պարոն Սեղենի տառ այծերն եյին թռչկո-  
տում։

Բանն այն եր, վոր արս Բլանքեթը վոչնչից չեր վա-  
խենում։

Մի վոստյունով անցնում եր մեծ հեղեղատների վրա-  
յից, վորոնք թրջում ելին նրան փրփրալից փոշիսվ։ Այգ-  
պիսի ժամանակ ամբողջովին խոնավ, թրջված, նա գնում-  
պառկում եր տափակ ժայռի վրա և արևի տակ չորացնում  
իրեն։ Մի անգամ, հասնելով լիոնալին տափարակի յեզրը,  
առամերի մեջ սպիտակ ծաղիկ բռնած, նա ներքեռում,  
հովտում, տեսավ պարոն Սեղենի տունը՝ հետեւ շրջափա-  
կով միասին։ Այս տեսարանն արտասվելու չափ ծիծաղեց-  
րեց նրան։

— Վորքան վորքիկ և այդ բոլորը, — ասաց նա՛ —  
ի՞նչպես ելի կարողանում տեղավորվել ախտեղ։

Խղճուկ։ Տեսնելով իրեն այդքան բարձր աեղ  
կանգնած, կարծում եր առնվազն անքան մեծ, վորքան  
աշխարհը...

Մի խոսքով, այդ մի գեղեցիկ որ եր պարոն Սեղենի  
այծիկի կլանքում։ Կեսորին, հետուառաջ վաղելով, նա ընկավ  
մի խումբ այծյամերի մեջ, վորոնք ախորժակով կրծոտում  
ելին մի վայրի վորթատունկ։ Մեր սիրուն, սպիտակ շրջաղ-  
գեստով զրանող որիորդը մեծ հիացում առաջ բերեց։  
Նրան ամենալավ տեղը տվին վորթատուների մեջ, և  
բոլոր կավալերները շատ սիրալիր վերաբերմունք ցույց  
տվին։ Մինչև իսկ, ինչպես յերեռում ե, — այդ մեր մեջ  
մնա, Գրենգուար — սև մազերով մի ջահել այծյած բախտ  
ունեցավ Բլանքեթին դուր գալ։ Յերկու սիրահարներ մեկ  
կամ յերկու ժամ մոլորվեցին անտառում, և յեթե ուզում  
ես իմանալ, թե նրանք ինչի մասին խօսեցին, գնա

հարցը ու մամուռների միջով աննկատելի կերպով վազող շատախոս առվակներին:

Հանկարծ ցուրտ քամի փչեց: Լեռները ծածկվեցին մանիշակագույն ծխով: Յերեկոն վրա հասավ...

— Արդեն... ասացայ յօթիկը և տարակուսած կանգ առավ:

Ցածում դաշտերը թանձը մշուշով պատած ելին: Պարոն Սեգենի շրջափակ պարտեզը բոլորովին անհետացել եր մասախուղի մեջ, և յերեւում եր միայն անակի տանիքը, իսկ նրա վրա մի թեթև ծուխ: Բլանքեթը լսեց տուն վերադարձող նախիրի բոժոժների ձայնը, և նրա հոգին ըռլորովին տխրեց... Մի բագե, վոր թռչում եր դեպի տուն, անցնելիս թերեզի քսվեց նրան: Այծիկը սարսուեց... հետո լեռներում լսվեց մի յերկար վոռնոց.

— Ու, ու, ու...

Նա մտածեց գալիք մասին. ամբողջ որը մտքովն անդամ չեր անցել գայլը... Այդ բովեյին ինչ-վոր հեռու հովտում լսվեց փողի ձահն: Բարի պարոն Սեգենն եր, վոր մի վերջին հրավերի փորձն եր կատարում:

— Ու, ու, ու, ու,—վոռնում եր գայլը:

— Վերադարձիր, վերադարձիր, — կանչում եր փողը:

Բլանքեթն ուղեց վերադառնալ, սական հիշելով ցիցը, չվանը, շրջափակի ցանկը, մտածեց, վոր ալլիս չեր կարող այնպիսի կյանքին վերադառնալ և լավ կինի մնալ անտառում:

Փողը լոեց:

Այծիկն իր հետերց տերեների խըշրառց լսեց: Նա հետ դարձավ և մթության մեջ տեսավ կարճ ու ցից յերկու ականջ և յերկու փայլատակող աչքեր, Գայլն եր:

Ահագին, անշարժ նստած հետեւ թաթերի վրա նայում եր նա սպիտակ ալծիկին, նախորոք ատամները սրելով: Նա հաստատ գիտեր, վոր ուտելու յեր նրան, և

դրա համար ել չեր շտապում, այլ միայն չարությամբ ծիծաղում եր, յերբ այծիկը հետ գարձակ:

— Հա, հա: Պարոն Սեգենի արծիկն ել յեղել, — և նա իր ուծ, կարմիր լեզուն քսեց չորացած մոթին:

Բլանքեթն զգաց, վոր ինքը կորած ե... իսկույն հրշեց ծեր Ծընողի պատմությունը, վորն ամբողջ գիշերը կովել եր՝ առավոտյան ուտվելու համար: Առաջին իսկ ըսպելին նա ստածեց, թե ավելի լավ չի լինի իսկույն թույլ տալ, վոր գայլն իրեն ուտի, սակայն, մտածելով, նա պաշտպանողական դիրք բռնեց՝ գլուխը ծոելով և պողերն առաջ ցցելով, ինչպես վալել եր պարոն Սեգենի քաջ այծիկն, վոչ թե նրա համար, վոր գայլին սպանի, — այծերը գայլ չեն սպանում, — այլ բացառապես նրա համար, վոր համոզվի, թե կարմիր ել ինքն ել Ծընողի չափ յերկար դիմագրել:

Այն ժամանակ հրեշն առաջ յեկավ, և փոքրիկ յեղացուրները ոկտեցին գործեր:

Այս, համարձակ ալծիկ: Ինչպես քաջորեն նա կովի մտավ, տաս անգամից ավելի, — չեմ ստուժ Գրենգուար, — նա գայլին ստիպեց հետ քաշվել, վորպեսզի շունչ առնի: Այդ բռպելական ընդհատումների ժամանակ քաղցրասեր այծիկը չեր մոռանում շտապով միքանի ցողուն կարել իր սիրելի խոտից, հետո բերանը լիքը նա նորից սկսում եր կովել: Կոփմա ամբողջ գիշերը տեսեց: Յերբեմն-յերբեմն պարոն Սեգենի այծիկը հայացը եր նետում պայծառ յերկնքում փայլող աստղերին և ինքն իրեն ասում:


— Ահ, միայն թե կարողանայի դիմագրել մինչեւ լուսաբաց:

Միմլանց հետերց մարեցին աստղերը: Բլանքեթը կրկնապատկեց լեղջուրի հարվածները, իսկ գայլը՝ ատամներինը...

Հորիպոնի վրա տժգույն լույս յերկաց...

Ինչ-վոր մի ագարակից լսվեց աքաղաղի խոպոտ կանչը:

Վերջապես... ասաց թշվառ կենդանին, վոր միմիայն  
գույսի ծագմանն եր սպասում՝ մեռնելու համար, և նա  
փովեց գետին իր սքանչելի սպիտակ մուշտակով, վորն



արնաթաթախ եր դարձել բոլորովին...


Այն ժամանակ գայլն ընկավ այծիկի վրա և խժուց  
նրան:

Մնաս բարով, Գրենգուար:

Այն պատմությունը, վոր դու լսեցիր,—իմ կողմից  
հնարված հեքիաթ չե: Յեթե դու լերբեկց կզատ Պրովանս,  
շատ կլսես մեր գյուղացիներից «Պարօն Սեգենի այծիկի  
մասին, վորն ամբողջ գիշերը կովեց գայլի հետ, իսկ հետո,  
առավոտյան, գայլը կերավ նրան»:

Լսում ես, Գրենգուար.

«Իսկ հետո, առավոտյան գայլը կերավ նրան»:



Պատ. Խոմբաղիք՝ Հ. Հայրապետյան  
Տելու. Խոմբաղիք՝ Ան. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Ա. Արդարանյան  
Կոնարու ուղղագրիչ՝ Յ. Տ. Մինասյան



Քլավլիսի լիսզմբ՝ Ա-4075 Հրամ. 4639.

Թուղթ 62X94. Պատվեր 477. Տիրած 8000.

Մեկ մամբ 24,480 նշան. Տպագր. 2 մամ.

Հասձնված և արտադրության 16 մայիսի 1938 թ.

Առորագրված և տպագրության համար 28 սեպտ. 1938 թ.

Գլուխատի 1 տպարտն, Յերեզան, Լոնինի 65

A. 1939

Act No 108

4110 70 4.

ГАРМ.

30662

А. ДОДЕ  
ПИСЬМА С МОЕЙ  
МЕЛЬНИЦЫ  
ГНЗ. АРМ. ССР. ЕРЕВАН

mp - 1

gr - 2

ՀՀ Ազգային գրադարան



NL0387261

1768

3-3066<sub>a</sub>